ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

22 " 09 2020թ. N 1360-Ա

ՀՐԱՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴԵՐՔԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄՆ ՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 573-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 3-ի N 1446-Ն որոշման հավելվածի 14-րդ կետով և ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 659-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հրամայում եմ

1. Ստեղծել պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի 1-ի:

2. Հաստատել պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու մասին» N 573-Ա հրամանը:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանին:

22.09.2020

X

VERIFIED OCSP 22.09.2020 17:29:31 GMT+4

Signed by: SIMONYAN ARMEN 4003890647 /Ս.Պապիկյան

Հավելված 1
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
22 «09» 2020 թվականի N1360-Հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի

Սերգեյ Աբրահամյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետ (հանձնաժողովի նախագահ),
Գոհար Քոչինյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահի տեղակալ),
Կարեն Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի պետ,
Սուրեն Մամյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ,
Հարություն Մովսիսյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն,
Միքայել Սուքիասյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագետ,

Արամ Բաղդասարյան	փորձագետ (համաձայնությամբ),
Ալբերտ Նաջարյան	փորձագետ (համաձայնությամբ),
Արմեն Հովհաննիսյան	փորձագետ (համաձայնությամբ),
Խաչիկ Սապոնջյան	փորձագետ (համաձայնությամբ),
Ռուբեն Մովսեսյան	փորձագետ (համաձայնությամբ),
Գևորգ Բալումյան	փորձագետ (համաձայնությամբ),
Արշավիր Հովհաննիսյան	փորձագետ (համաձայնությամբ),
Հրանտ Ավետիսյան	փորձագետ (համաձայնությամբ),
Գրիգոր Մուխսի-Հովեյան	փորձագետ (համաձայնությամբ),
Գրիգոր Գրիգորյան	փորձագետ (համաձայնությամբ):

Հավելված 2
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
«22» 09.2020 թվականի №1360-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի

1. Պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) խորհրդակցական մարմին է, որը կոչված է.

1) ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության արժանահավատությունը գնահատելու, օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաներն ու պաշարները հաստատելու կամ չհաստատելու, ինչպես նաև արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ հետագա աշխատանքների արդյունքում չհավաստված պաշարների դուրսգրման հիմնավորվածության մասին եզրակացություն տալու,

2) գնահատելու ընդերքի ոլորտում գործող նորմատիվ մեթոդական հենքի համապատասխանությունն արդի պայմաններին և առաջարկություններ ներկայացնելու վերջինիս կատարելագործման անհրաժեշտության վերաբերյալ:

2. Հանձնաժողովի կազմը բաղկացած է 16 անդամից, այդ թվում՝ չորսը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ընդերքի վարչության (այսուհետ՝ Վարչություն), երկուսը «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության հաստիքային աշխատակիցներից և տասը փորձագետներից:

3. Վարչության պետը, Վարչության՝ ընդերքաբանական փորձաքննության, ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի պետերը, ընդերքաբանական փորձաքննության բաժնի մեկ գլխավոր մասնագետը Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե:

4. Վարչության պետը Հանձնաժողովի նախագահն է, ընդերքաբանական փորձաքննության բաժնի պետը՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալն է:

5. Հանձնաժողովի նիստը (այսուհետ՝ Նիստ) հրավիրում և/կամ վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ տեղակալը կամ նրա կողմից նշանակված այլ անդամ:

6.Նիստի անցկացման կազմակերպումը իրականացնում է Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը, ով Հանձնաժողովի անդամ չէ և հանդիսանում է Վարչության աշխատակից: Վերջինս նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ տեղյակ է պահում նիստի օրակարգի, անցկացման վայրի և ժամի մասին Հանձնաժողովի բոլոր անդամներին, միաժամանակ նրանց հնարավորություն տալով ծանոթանալու փորձաքննության ներկայացված նյութերի հետ՝ ուղարկելով պաշտոնական էլեկտրոնային հասցեներին կամ այլ միջոցով:

7. Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Նիստում, որը հրավիրվում է ըստ անհրաժեշտության:

8. Նիստին մասնակցում է նաև քննարկվող նյութերի փորձաքննության պատասխանատուն, եթե վերջինս արդեն իսկ ընդգրկված չէ Հանձնաժողովի կազմում: Հանձնաժողովի անդամ չհանդիսանալու դեպքում վերջինս չի մասնակցում քվեարկությանը:

9.Նյութերի պետական ընդերքաբանական փորձաքննությունն իրականացրած Նախարարության անկախ փորձագետի և (կամ) նյութերի հեղինակի բացակայությունը խոչընդոտ չէ Նիստն անցկացնելու համար:

10.Նիստին դիտորդի կարգավիճակով կարող են մասնակցել նաև քննարկվող նյութերի պատվիրատուն և հրավիրված այլ անձինք:

11. Առանձին դեպքերում փորձաքննվող հարցերը կարող են քննարկվել գնահատվող օբյեկտներում հրավիրվող արտագնա Նիստում, որի կազմակերպումն ապահովում է Նախարարությունը:

12. Նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի 1/3-ը: Ընդ որում, պարտադիր է փորձաքննվող նյութերի հեղինակ չհանդիսացող փորձագետներից առնվազն մեկ և «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության հաստիքային աշխատակիցներից առնվազն մեկ անդամների մասնակցությունը:

13. Նիստի ընթացքում որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ Նիստին մասնակցած անդամների (բացառությամբ նյութերի հեղինակի, ով քվեարկության իրավունք չունի) ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշիչ է Նիստը նախագահողի ձայնը:

14. Նիստի համար կազմվում է արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն)՝ նշելով օրակարգը, մասնակիցներին, զեկուցողներին, քվերակության դրված հարցերը և արդյունքները, որը ստորագրում են նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամները:

15. Պետական ընդերքաբանական փորձաքննության արդյունքների հիման վրա Հանձնաժողովը կազմում է փորձագիտական եզրակացություն (այսուհետ՝ Եզրակացություն):

16. Եզրակացությունը մասնագիտական հիմնավորում է Նախարարության կողմից ընդունվելիք համապատասխան որոշման համար, որը ստորագրվում է Հանձնաժողովի՝ Նիստին ներկա անդամների կողմից: Եզրակացության վերաբերյալ Հանձնաժողովի անդամն իրավունք ունի ներկայացնել հատուկ կարծիք:

17. Եզրակացության բովանդակությունը ներառում է տեղեկություն ներկայացված նյութերի ուսումնասիրության, բարձրացված և քննարկված հարցերի, մասնագիտական եզրահանգումների, ինչպես նաև Նախարարության կողմից ընդունվելիք որոշման

առաջարկության վերաբերյալ: Եզրակացության անքակտելի մաս է կազմում Արձանագրությունը:

18. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն.

1) նախապես Վարչությունում ծանոթանալու Հանձնաժողովի նիստում քննարկվելիք նյութերի ամբողջական փաթեթի հետ՝ նյութերի մեծածավալ լինելու դեպքում,

2) մասնակցելու Նախարարության պետական ընդերքաբանական փորձաքննությանը ներկայացված նյութերի աշխատանքային քննարկումներին,

3) աշխատանքային քննարկումների ժամանակ և Նիստերում գրավոր կամ բանավոր ներկայացնելու իրենց տեսակետները փորձաքննվող նյութերի վերաբերյալ:

19. Հանձնաժողովի անդամները պարտավոր են.

1) ապահովել նյութերի պետական ընդերքաբանական փորձաքննության ընթացքում ձեռք բերված մասնագիտական, առևտրային և այլ տեղեկատվության խորհրդապահությունը,

2) ապահովել պետական ընդերքաբանական փորձաքննության ներկայացված նյութերի վերաբերյալ իրենց օբյեկտիվ և անաչառ մոտեցումները:

3) նախապես տեղեկացնել քննարկվող հարցերի առնչությամբ շահերի բախման որևէ դրսևորման հնարավորության մասին և Նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելիի ձայնով պահանջի դեպքում հրաժարվել քվեարկության իրավունքից՝ պահպանելով մասնագիտական կարծիք ներկայացնելու հնարավորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«28».....06.....2021թ. N.....1023-Ա.....

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 1360-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 659-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 22–ի «Պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմն ու հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մայիսի 5-ի թիվ 573-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1360–Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) Հրամանի 1-ին կետով հաստատված Հավելված 1–ում «Միքայել Սուքիասյան – Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագետ» բառերը փոխարինել «Լիլիա Ալավերդյան – Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվառման և օգտակար հանածոների պետական կադաստրի բաժնի պետ» բառերով:

2) Հրամանի 2-րդ կետով հաստատված Հավելված 2–ում՝

ա. 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1 և 3.2 կետեր.

«3.1 «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը և «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվառման և օգտակար հանածոների պետական կադաստրի բաժնի պետը Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե:

3.2 Հանձնաժողովում ներգրավված տասը փորձագետներից՝

1) Երեքը պետք է լինեն բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ, մասնավորապես՝ Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի համապատասխանաբար մեկական ներկայացուցիչ:

2) Յոթ փորձագետներից յուրաքանչյուրը պետք է լինի ընդերքաբանության ոլորտի մասնագետ, որը համապատասխանում է հետևյալ չափանիշներից առնվազն մեկին.

ա. ունի օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կոնդիցիաների պարամետրերի նյութերի փորձաքննություն իրականացնող ստորաբաժանումում առնվազն գլխավոր մասնագետի նվազագույնը 3 (երեք) տարվա աշխատանքային փորձ և հանդիսանում է նվազագույնը 5 (հինգ) օգտակար հա-

նածոների հանքավայրերի կոնդիցիաների հիմնավորման կամ պաշարների հաշվարկման նյութերի հեղինակ կամ համահեղինակ, որոնք հաջողությամբ անցել են նախկին ԽՍՀՄ և ՀՀ պետական ընդերքաբանական փորձաքննություններ,

բ. ունի գիտական աստիճան երկրաբանության կամ լեռնային գործ բնագավառում և հանդիսանում է նվազագույնը 5 (հինգ) օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների հիմնավորման կամ պաշարների հաշվարկման նյութերի հեղինակ կամ համահեղինակ, որոնք հաջողությամբ անցել են նախկին ԽՍՀՄ և ՀՀ պետական ընդերքաբանական փորձաքննություններ,

գ. ունի երկրաբանություն կամ լեռնային գործ մասնագիտությամբ ավելի քան 25 (քսանհինգ) տարվա աշխատանքային փորձ և հանդիսանում է նվազագույնը 7 (յոթ) օգտակար հանածոների հանքավայրերի (որից առնվազն 3-ը մետաղական) կոնդիցիաների հիմնավորման կամ պաշարների հաշվարկման նյութերի հեղինակ կամ համահեղինակ, որոնք հաջողությամբ անցել են նախկին ԽՍՀՄ և ՀՀ պետական ընդերքաբանական փորձաքննություններ:»:

բ. Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20-24-րդ կետերով.

«20. Լիազոր մարմնի պաշտոնական կայքում սույն հրամանի հրապարակումից հետո տասնհինգօրյա ժամկետում տրվում է հայտարարություն Հանձնաժողովի կազմում ներգրավելու նպատակով սույն Հավելվածի 3.2 կետի 2-րդ ենթակետով սահմանված չափանիշներին համապատասխանող փորձագետների հայտերի՝ երկշաբաթյա ժամկետում ընդունման վերաբերյալ:

21. Հանձնաժողովի կազմում ընդգրկված՝ սույն Հավելվածի 3.2 կետի 2-րդ ենթակետում նշված փորձագետների կազմը ենթակա է փոփոխման յուրաքանչյուր երկու տարին մեկ:

22. Սույն Հավելվածի 21-րդ կետում սահմանված ժամկետը լրանալուց երկու ամիս առաջ Լիազոր մարմնի պաշտոնական կայքում տրվում է հայտարարություն Հանձնաժողովի կազմում ներգրավվող փորձագետների կազմի փոփոխման և վերջիններիս ներկայացվող չափանիշների վերաբերյալ:

23. Ներկայացված չափանիշներին չբավարարող հայտերի կամ ընդհանրապես հայտեր չներկայացվելու դեպքում Հանձնաժողովը պահպանում է նախկին կազմը:

24.Հանձնաժողովի կազմում ներգրավելու նպատակով Լիազոր մարմինը ներկայացված հայտերից ընտրում է սույն Հավելվածի 3.2 կետի 2-րդ ենթակետով սահմանված չափանիշներին համապատասխանող յոթ փորձագետ.

1) Նշված չափանիշներին համապատասխանող յոթից ավելի թեկնածուների դեպքում որպես առավելություն դիտարկվում է օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների հիմնավորման կամ պաշարների հաշվարկման նյութերի վերաբերյալ թեկնածուների հաշվետվությունների քանակը, որոնք հաջողությամբ անցել են նախկին ԽՍՀՄ և ՀՀ պետական ընդերքաբանական փորձաքննություններ:

2) Ներկայացված չափանիշներին բավարարող յոթից պակաս թեկնածուների դեպքում, վերջիններս ներգրավվում են Հանձնաժողովի կազմում, իսկ թափուր մնացած տեղերը լրացվում են գործող Հանձնաժողովի անդամներից, հաշվի առնելով Հանձնաժողովի տվյալ անդամի համաձայնությունը և որպես առավելություն դիտարկվում է օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների հիմնավորման կամ պաշարների հաշվարկման նյութերի վերաբերյալ թեկնածուների հաշվետվությունների քանակը, որոնք հաջողությամբ անցել են նախկին ԽՍՀՄ և ՀՀ պետական ընդերքաբանական փորձաքննություններ:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Լիազոր մարմնի պաշտոնական կայքում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանին:

28.06.2021

X

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Ս.Պապիկյան
պաշտոնակատար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"12".....07.....2021թ. N.....1129.....-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 1360-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 659-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 22–ի «Պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմն ու հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մայիսի 5-ի թիվ 573-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1360–Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) Հրամանի 1-ին կետով հաստատված Հավելված 1–ում՝

ա. «Սերգեյ Աբրահամյան – Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)» բառերը փոխարինել «Կարեն Գասպարյան – Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետի ժ/պ (հանձնաժողովի նախագահ)» բառերով,

բ. «Կարեն Գասպարյան – Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի պետ» բառերը հանել:

2) Հրամանի 2-րդ կետով հաստատված Հավելված 2–ի՝

ա. 19-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) նախապես (գրավոր) կամ նիստի ընթացքում ներկայացնել հանձնաժողովի անդամի՝ քննարկվող հարցի առնչությամբ շահերի բախման հանգամանքի առկայության մասին հայտարարություն և հայտնել ինքնաբացարկ՝ զրկվելով քննարկմանը և քվեարկությանը մասնակցելու, ինչպես նաև մասնագիտական կարծիք ներկայացնելու հնարավորությունից:»,

բ. Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 25-րդ կետով.

«25. շահերի բախման կամ հանձնաժողովի անդամի անաչառությունը կասկածի տակ դնող որևէ այլ հանգամանքի առկայության դեպքում, երբ ինքնաբացարկ չի հայտնվել Հանձնաժողովը ցանկացած անդամի առաջարկությամբ Նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելիի ձայնով բացարկ է հայտնում Հանձնաժողովի համապատասխան անդամին, ինչի արդյունքում վերջինս զրկվում է քննարկմանն ու քվեարկությանը մասնակցելու, ինչպես նաև մասնագիտական կարծիք ներկայացնելու հնարավորությունից:»:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանին:

12.07.2021

X

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Ս.Պապիկյան

պաշտոնակատար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«30» 08 2021թ. N 1499-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 1360-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 659-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 22-ի «Պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողով ստեղծելու, դրա անհատական կազմն ու հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մայիսի 5-ի թիվ 573-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1360-Ա հրամանի 1-ին կետով հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանին:

8/30/2021

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ.Սանոսյան

Հավելված 1
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
«30»08.2021 թվականի № ____ հրամանի
Բ499-Լ

«Հավելված 1
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2020 թվականի սեպտեմբերի 22-ի
№ 1360-Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի

Կարեն Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության պետի պարտականությունները կատարող (հանձնաժողովի նախագահ),
Գոհար Քոչինյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժնի պետի պարտականությունները կատարող (հանձնաժողովի նախագահի տեղակալ),
Սուրեն Մամյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ,
Հարություն Մովսիսյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն,
Լիլիա Ալավերդյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության

հաշվառման և օգտակար հանածոների պետական կադաստրի բաժնի պետ,

Մարատ Գրիգորյան	փորձագետ (համաձայնությամբ),
Արմեն Հովհաննիսյան	փորձագետ (համաձայնությամբ),
Արշավիր Հովհաննիսյան	փորձագետ (համաձայնությամբ),
Արամ Բաղդասարյան	փորձագետ (համաձայնությամբ),
Ալբերտ Նաջարյան	փորձագետ (համաձայնությամբ),
Խաչիկ Սապոնջյան	փորձագետ (համաձայնությամբ),
Գևորգ Բալումյան	փորձագետ (համաձայնությամբ),
Միքայել Սուքիասյան	փորձագետ (համաձայնությամբ),
Հրանտ Ավետիսյան	փորձագետ (համաձայնությամբ),
Գրիգոր Մուխսի-Հովեյան	փորձագետ (համաձայնությամբ):»: